ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 15.04.2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ ԿԳ-25095-2-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետև նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետև նաև՝ Խորհուրդ)**՝ նախագահությամբ Պավել Գյուլումյանի խորհրդի անդամներ՝ Մարինե Ֆարմանյանի, Թամարա Բաղդասարյանի, Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Վարդիկյանի, Ռուբեն Հակոբյանի, Դավիթ Մելքոնյանի, Արսեն Հարությունյանի և Ցոլակ Մարգարյանի.

գրավոր ընթացակարգով քննության առնելով փաստաբան Սամվել Լևոնի Միրզոյանի (արտոնագիր՝ թիվ 245) **(այսուհետև նաև՝ Բողոքաբեր կամ Փաստաբան)** բողոքը Պալատի կարգապահական հանձնաժողովի 15.04.2026 թվականի թիվ ԿԳ-25095-2-Ա որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Արման Վլասյանը և Անահիտ Գյուլնազարյանը **(այսուհետև նաև՝ Դիմողներ)** դիմելով Պալատ, հայտնել են, որ 2024թ. հոկտեմբերին որոշել են Արտաշատում գտնվող գույքը վաճառել, որն ունեցել է 1 սեփականության վկայական՝ բաղկացած տնից և հողամասից, որոնք ամբողջությամբ գրավադրված են եղել «Արդշինբանկ» ՓԲԸ-ում: Ֆինանսական դժվարությունների պատճառով որոշել են վաճառել տան որոշակի հատվածը:

Դիմողները նշել են, որ գնորդ Նարեկ Բադալյանին հայտնել են այդ ամենի մասին և ծանոթացրել փաստաբան Սամվել Միրզոյանի հետ, ով 100.000 ՀՀ դրամ գումարի դիմաց կազմել է պայմանագիր, իսկ վճարման դիմաց փաստաբանը չի տրամադրել որևէ կտրոն:

Փաստաբանն առաջարկել է, որ Դիմողների ամբողջ գույքը հաջորդող գրավի

պայմանագրով գրավադրվի Նարեկ Բադալյանի մոտ: Բաժին առանձնացնելու, բանկից թույլտվություն ստանալու և մնացած գործընթացը հարթ կազմակերպելու համար Սամվել Միրզոյանը հավելյալ 660.000 ՀՀ դրամ գումար է պահանջել և ստացել:

Դիմողները նշել են նաև, որ Սամվել Միրզոյանը և Նարեկ Բադալյանը չեն սպասել, որ Դիմողները գույքի բաժանում կատարեն, այլ դիմել են դատարան, որպեսզի ամբողջ գույքը մնա Նարեկ Բադալյանի մոտ գրավադրված:

Ըստ Դիմողների՝ Փաստաբանն անցել է Նարեկ Բադալյանի կողմը և իրենց կողմից տրված տեղեկատվությունը և փաստաթղթերն օգտագործել է իրենց դեմ:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողները խնդրել են Փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Պալատի նախագահի առաջին տեղակալի 29.12.2025 թվականի թիվ 357-Ա/ԿԳ-25095 որոշմամբ Փաստաբան Սամվել Լևոնի Միրզոյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.2.2 և 3.2.8 ենթակետերի պահանջների ենթադրյալ խախտումների հիմքով:

Միաժամանակ, Դիմումատուների կողմից ներկայացված այլ պահանջների մասով կարգապահական վարույթ հարուցելը մերժվել է վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով:

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)** 15.04.2026 թվականի թիվ ԿԳ-25095-2-Ա որոշմամբ **(այսուհետև նաև՝ Որոշում)** Փաստաբանին ենթարկել է կարգապահական պատասխանատվության՝ նշանակելով խիստ նկատողություն և որպես լրացուցիչ կարգապահական տույժ սահմանելով «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ակադեմիական ժամ տևողությամբ վերապատրաստում՝ վեցամսյա ժամկետում, «Փաստաբանության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.2.2 և 3.2.8 ենթակետերի պահանջները խախտելու համար:

2. **ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի** 15.04.2026 **թվականի թիվ ԿԳ**-25095-2-**Ա որոշման էությունը**:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա նյութերը, արձանագրել է, որ 2024 թվականի հոկտեմբերին Դիմումատուները դիմել են Փաստաբանին՝ իրենց անշարժ գույքի վաճառքի գործընթացի իրավական ապահովման նպատակով:

Հանձնաժողովը, մասնավորապես, հաշվի է առել Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունները, որոնցից հետևում է, որ վերջինս Դիմումատուներին տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն, կազմել է գործարքին վերաբերող փաստաթղթեր, ինչպես նաև ստացել է վճարում:

Հանձնաժողովը հաստատված է համարել այն հանգամանքը, որ հետագայում Փաստաբանը Նարեկ Բադալյանի հետ կնքել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր և վերջինիս ներկայացրել է Դիմումատուների դեմ հարուցված դատական գործերով, մասնավորապես՝ պայմանագրի կնքմանը պարտավորեցնելու և գումարի բռնագանձման պահանջներով:

Հանձնաժողովը գտել է, որ Դիմումատուները Փաստաբանի նախկին վստահորդներն են եղել, իսկ Նարեկ Բադալյանը՝ հետագայում Փաստաբանի կողմից ներկայացված անձը, և հանդես է եկել Դիմումատուների նկատմամբ հակադիր շահ ունեցող անձի կարգավիճակով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դիմումատուների կողմից իրենց շահերի ներկայացման հետ կապված Փաստաբանին տրված գրավոր համաձայնություն՝ վերջինիս կողմից Նարեկ Բադալյանի շահերը ներկայացնելու վերաբերյալ, գործում առկա չէ, Հանձնաժողովը եզրահանգել է, որ Փաստաբանը խախտել է «Փաստաբանության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.2.2 ենթակետի պահանջները:

Միաժամանակ, Հանձնաժողովը գտել է, որ Դիմումատուներին իրավաբանական օգնություն մատուցելու ընթացքում Փաստաբանին հասանելի է դարձել նրանց դիրքորոշումների, գործարքի պայմանների, ակնկալիքների, գույքային շահերի և գործարքի իրականացման հանգամանքների վերաբերյալ տեղեկատվություն, և հետագայում նույն գործարքի մյուս կողմի շահերը Դիմումատուների դեմ ներկայացնելու պայմաններում առկա է եղել նախկին վստահորդներից ստացված տեղեկատվության օգտագործման կամ բացահայտման ողջամիտ ռիսկ: Հետևաբար, Հանձնաժողովը հաստատված է համարել նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.2.8 ենթակետի խախտումը:

Հաշվի առնելով խախտումների բնույթը, Փաստաբանի մեղքի աստիճանը, կարգապահական պատասխանատվության ենթարկվելու հանգամանքները և Փաստաբանի մասնագիտական գործունեության տևողությունը՝ Հանձնաժողովը կիրառել է «խիստ նկատողություն» տույժի տեսակը՝ որպես լրացուցիչ տույժ սահմանելով «Դեոնթոլոգիա» թեմայով վերապատրաստում:

3.<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>.

Փաստաբանը Որոշման դեմ ներկայացված բողոքում հայտնել է, որ համաձայն չէ դրա հետ և գտնում է, որ զեկուցողը սխալ է ներկայացրել գործի իրական փաստական հանգամանքները, ինչի հետևանքով կայացվել է սխալ որոշում:

Բողոքաբերը, մասնավորապես, պնդել է, որ Որոշման մեջ ստեղծվել է այնպիսի տպավորություն, թե Դիմումատուները սկզբնապես իրեն դիմել են որպես փաստաբանի՝

իրենց իրավունքների ներկայացման և պաշտպանության նպատակով, և որ հետագայում, երբ իրեն է դիմել գնորդ Նարեկ Բադալյանը, ինքը դադարեցրել է Դիմումատուներին իրավաբանական օգնություն տրամադրել և սկսել է պաշտպանել Բադալյանին:

Ըստ Բողոքաբերի՝ իրականում սկզբնապես իր գրասենյակ է ներկայացել իր հարևան Արման Վլասյանը, ում ինքը նախկինում իրավաբանական ծառայություն է մատուցել: Վլասյանը հայտնել է, որ ցանկանում է վաճառել իրեն պատկանող բնակարանի մասը, իսկ գնորդ Նարեկ Բադալյանը ցանկանում է նախնական գործարքը՝ նախավճարի տրամադրումը, իրականացնել նոտարական կարգով: Այդ կապակցությամբ Փաստաբանը հայտնել է, որ անհրաժեշտ է նաև գնորդի ներկայությունը՝ կողմերի կամքը պարզելու և գործարքի պայմանները հստակեցնելու համար:

Բողոքաբերի պնդմամբ՝ մի քանի օր անց իր գրասենյակ են ներկայացել Արման Վլասյանը, Անահիտ Գյուլազարյանը և Նարեկ Բադալյանը՝ վերջինիս կնոջ և մոր հետ միասին: Կողմերը միասին հայտնել են գործարքը կատարելու իրենց կամքը և դրա պայմանները, որից հետո բոլորը միասին խնդրել են Փաստաբանին կազմել համապատասխան իրավաբանական փաստաթղթեր:

Բողոքաբերը գտնում է, որ իր կողմից ծառայությունները մատուցվել են ոչ թե միայն Դիմումատուներին առանձին, այլ բոլոր կողմերին միաժամանակ, և կողմերը բանավոր համաձայնվել են, որպեսզի ինքը նրանց ընդհանուր շահերը ներկայացնի: Հետևաբար, ըստ Բողոքաբերի, Կանոնագրքի 3.2.2 ենթակետի պահանջների կիրառումն անհիմն է:

Բողոքաբերը վիճարկել է նաև այն եզրահանգումը, որ Դիմումատուները հանդիսացել են իր վստահորդները՝ նշելով, որ իրավաբանական օգնության տրամադրման հետ կապված նրանց և իր միջև պայմանագիր չի կնքվել, իսկ 100.000 ՀՀ դրամ վճարումը վերաբերել է բացառապես իրավաբանական փաստաթղթեր կազմելուն և չի ենթադրել այդ փաստաթղթերի հետագա հետևանքների համար պատասխանատվություն:

Բողոքում նշվել է նաև, որ Կանոնագրքի 3.2.8 ենթակետի կիրառումը նույնպես անհիմն է, քանի որ Բադալյանի ներկայանալուց առաջ Դիմումատուները Բողոքաբերին չեն հայտնել որևէ այնպիսի տեղեկատվություն, որը կվերաբերեր գաղտնի գործարքի կամ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության, և որի հրապարակումը կամ հակառակ կողմին հայտնի դառնալը կարող էր վնաս պատճառել Դիմումատուներին:

Վերջապես, Բողոքաբերը նշել է, որ իր կողմից Դիմումատուների պատվերը կատարելուց հետո այդ պատվերն ավարտվել է, և դրանից հետո ինքը Բադալյանի հետ առանձին իրավաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագիր է կնքել և վերջինիս շահերի պաշտպանությունը ստանձնել:

Բողոքաբերը խնդրել է վերացնել Որոշումը:

4. **Դիմողների բացատրությունը**.

Դիմողներ Անահիտ Գյուլնազարյանը և Արման Վլասյանը ներկայացրած բացատրությամբ վերահաստատել են իրենց սկզբնական դիմումում նշված հանգամանքները՝ պնդելով, որ Փաստաբանը, իրենցից ստանալով վարձատրություն և իրավաբանական օգնություն տրամադրելով, հետագայում ստանձնել է հակառակ կողմի՝ Նարեկ Բադալյանի շահերի պաշտպանությունը, վերջինիս փոխանցել իրենց վերաբերյալ տեղեկություններ և փաստաթղթեր՝ խախտելով փաստաբանական գաղտնիքի պահպանման և մասնագիտական վարքագծի կանոնները:

5. **Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Դիմողներին պատկանող Արարատի մարզ, Արտաշատ համայնք, Մարքսի փողոց 6 շենք 27/1 հասցեում գտնվող 58.9 քմ բնակարանը (**այսուհետև՝ անշարժ գույք**) օտարելուն ուղղված գործարքի ուղեկցման համար վերջիններս 2024թ. հոկտեմբերին դիմել են Փաստաբանին և պայմանավորվածություն ձեռք բերել իրավաբանական օգնություն ցույց տալու մասին, սակայն պայմանագիր չի կնքվել: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

2. Դիմողները վճարել են Փաստաբանին մատուցվելիք ծառայությունների դիմաց: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

3. Փաստաբանը Դիմողներին տրամադրել է իրավական խորհրդատվություն, կազմել է մի շարք փաստաթղթեր՝ պայմանագրեր, համաձայնագրեր և այլն, որպեսզի կազմակերպվի Դիմողների անշարժ գույքի առուվաճառքը գնորդ՝ Նարեկ Բադալյանին: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, ինչպես նաև 09.10.2024թ.տարաժամկետ հանդիպական պարտավորությունների կատարման մասին Պարտավորագրով, 16.10.2024թ. Հայտարարագրով, 10.10.2024թ. Համաձայնագրով, դրամական մուտքերի օրդերներով, 09.12.2024թ. սպացականով, ինչպես նաև 09.10.2024թ. Հիփոթեքի նախնական խառը պայմանագրով:*

4. Կողմերի միջև անշարժ գույքի առքուվաճառքի գործարքը չի կայացել: *Սուն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, ինչպես նաև թիվ ԱՎԴ/1202/02/25 քաղաքացիական գործերով «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

5. Փաստաբանը փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել գնորդ Նարեկ Բադալյանի հետ, ստանձնել նրա իրավունքների պաշտպանությունը թիվ ԱՎԴ/1256/02/24 քաղաքացիական գործով և ներկայացրել հայցադիմում պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասին ընդդեմ Դիմողների: *Սույն*

փաստը հաստատվում է թիվ ԱՎԴ/1256/02/24 քաղաքացիական գործերով «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:

6. Փաստաբանը ստանձնել է Նարեկ Բադալյանի իրավունքների պաշտպանությունը թիվ ԱՎԴ/1202/02/25 քաղաքացիական գործով և Դիմողներ դեմ ներկայացրել հայցադիմում գումարի բռնագանձման պահանջի մասին: *Սույն փաստը հաստատվում է ԱՎԴ/1202/02/25 քաղաքացիական գործերով «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

6.**Խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը**.

Խորհուրդը, ուսումնասիրելով բողոքը, կարգապահական գործի նյութերը, Հանձնաժողովի որոշումը, գտնում է, որ Հանձնաժողովի որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39.11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննության ժամանակ* ***խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:***

Օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) կարգապահական հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) կարգապահական հանձնաժողովի որոշումն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելու մասին:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Օրենքի 39.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են, ի թիվս այլնի, Օրենքի և (կամ) փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Օրենքի 39.1-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության, եթե նրա մեղավորությունը բացակայում է, իսկ նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:

Միաժամանակ, նշված սկզբունքը չի նշանակում, որ կարգապահական վարույթի շրջանակում փաստաբանի կողմից ներկայացված ցանկացած հանգամանք պետք է ընդունվի որպես հաստատված փաստ, եթե այն հակասում է գործի այլ նյութերով հաստատված հանգամանքներին:

Բողոքաբերի հիմնական փաստարկներից մեկն այն է, որ Արման Վլասյանը և Անահիտ Գյուլնազարյանը չեն հանդիսացել իր վստահորդները, քանի որ նրանց և իր միջև չի կնքվել իրավաբանական ծառայությունների մատուցման գրավոր պայմանագիր, իսկ 100.000 ՀՀ դրամ վճարումը կատարվել է բացառապես իրավաբանական փաստաթղթեր կազմելու համար:

Խորհուրդը նշված փաստարկը հիմնավոր չի համարում:

Փաստաբան-վստահորդ հարաբերությունների առկայությունը չի կարող պայմանավորվել բացառապես իրավաբանական ծառայությունների մատուցման գրավոր պայմանագրի առկայությամբ, եթե գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ անձը դիմել է փաստաբանին իրավաբանական օգնություն ստանալու նպատակով, իսկ փաստաբանը փաստացի իրականացրել է իրավաբանական օգնության տրամադրմանն ուղղված գործողություններ:

Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանական գործունեության տեսակներից է իրավական խորհրդատվությունը, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրությունն ու կազմումը:

Կանոնագրքի 1.4-րդ կետի 8-րդ ենթակետի իմաստով՝ վստահորդ է այն անձը, որը դիմել է փաստաբանին իրավաբանական օգնություն ստանալու համար:

Տվյալ դեպքում գործի նյութերով հաստատվում է ոչ միայն այն, որ Դիմողները Փաստաբանին դիմել են, այլ նաև այն, որ վերջինս նրանց դիմումի կապակցությամբ իրականացրել է կոնկրետ իրավաբանական ծառայություններ մատուցելուն ուղղված գործողություններ՝ տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն և կազմել է անշարժ գույքի վաճառքի գործարքի իրականացմանն ուղղված իրավաբանական փաստաթղթեր:

Ավելին, այդ ծառայությունների դիմաց Արման Վլասյանի կողմից Փաստաբանին վճարվել է 100.000 ՀՀ դրամ, ինչը ևս փաստում է իրավաբանական օգնության տրամադրման և փաստաբան-վստահորդ հարաբերությունների առկայության մասին: Փաստաթուղթ կազմելը հենց օրենքով նախատեսված փաստաբանական գործունեության տեսակ է և տվյալ դեպքում կատարվել է անձանց դիմումի հիման վրա՝ նրանց կոնկրետ իրավական նպատակին հասնելու համար:

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ վճարման նպատակի կամ դրա իրավական հետևանքների վերաբերյալ Բողոքաբերի գնահատականը չի կարող հերքել այն օբյեկտիվ հանգամանքը, որ Դիմողները դիմել են Փաստաբանին իրավաբանական օգնություն ստանալու համար, իսկ վերջինս փաստացի տրամադրել է այդ օգնությունը:

Խորհուրդը կարևոր է համարում նաև Փաստաբանի՝ կարգապահական վարույթի ընթացքում ներկայացրած բացատրություններում նշված հանգամանքները: Մասնավորապես, Փաստաբանը 24.12.2025թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է,

որ սկզբնապես Արման Վլասյանն իրեն դիմել է անշարժ գույքի օտարման հարցով, իսկ հետագայում առաջարկել է, որպեսզի գնորդ Նարեկ Բադալյանը ներկայանա իր փաստաբանի հետ: Նույն բացատրության համաձայն՝ Նարեկ Բադալյանը հայտնել է, որ վստահում է իրեն և առանձին փաստաբանի կարիք չունի, ինչին ի պատասխան՝ Փաստաբանը նշել է, որ իր գրասենյակում բոլորի իրավունքները հավասարապես պաշտպանված են:

Խորհրդի գնահատմամբ՝ նշված հանգամանքները ևս վկայում են այն մասին, որ սկզբնական փուլում Արման Վլասյանի և Փաստաբանի միջև արդեն իսկ ձևավորված են եղել իրավաբանական օգնության տրամադրման հարաբերություններ: Մասնավորապես, գնորդին առանձին փաստաբանի հետ ներկայանալու առաջարկությունը վկայում է, որ Փաստաբանը տարբերակել է գործարքի մասնակիցների ինքնուրույն իրավական շահերը և գիտակցել նրանցից յուրաքանչյուրի իրավաբանական օգնություն ստանալու անհրաժեշտությունը:

Ընդ որում, Փաստաբանի՝ 26.01.2026թ. բացատրության վերաբերյալ Հանձնաժողովի որոշման մեջ արձանագրված է նաև, որ վերջինս ընդունել է Դիմողներին իրավաբանական օգնություն տրամադրելու և նրանց՝ իր վստահորդները հանդիսանալու հանգամանքները: Այս հանգամանքը ևս գնահատման ենթակա է Բողոքաբերի՝ նրանց վստահորդի կարգավիճակը վիճարկող փաստարկների համատեքստում:

Բողոքաբերը պնդում է նաև, որ ինքը ծառայություններ է մատուցել ոչ թե Դիմողներին առանձին, այլ գործարքի բոլոր կողմերին միասին, և կողմերը համաձայնվել են, որ ինքը ներկայացնի նրանց ընդհանուր շահերը:

Խորհուրդը գտնում է, որ նշված հանգամանքը, նույնիսկ դրա ամբողջությամբ հաստատվելու դեպքում, ինքնին չի կարող հանգեցնել Հանձնաժողովի որոշման վերացմանը:

Նախ, Փաստաբանի կողմից մի քանի անձանց ընդհանուր շահերի շրջանակում իրավաբանական օգնություն տրամադրելու հնարավորությունը չի ենթադրում, որ հետագայում այդ նույն անձանցից որևէ մեկի նկատմամբ հակադիր շահ ունեցող մյուս անձի շահերը փաստաբանը կարող է ներկայացնել՝ առանց նախկին վստահորդի համաձայնության:

Այսինքն՝ տվյալ դեպքում իրավական գնահատման ենթակա չէ միայն այն հարցը, թե ում համար է կազմվել նախնական փաստաթուղթը, այլ նաև այն հարցը, թե ով է դիմել Փաստաբանին՝ իրավաբանական օգնություն ստանալու համար, և ում դեմ է հետագայում ստանձնել մեկ այլ անձի ներկայացուցչությունը:

Տվյալ դեպքում այդ երկու փուլերն անմիջականորեն կապված են միմյանց հետ. նախ՝ Փաստաբանը մասնակցել է Դիմողների և Նարեկ Բադալյանի միջև նախատեսված

գործարքի նախապատրաստմանը, իսկ հետագայում՝ նույն գործարքի շրջանակում Նարեկ Բադալյանի շահերը ներկայացրել է Դիմողների դեմ:

Ուստի Բողոքաբերի այն պնդումը, թե սկզբնական փուլում բոլոր կողմերը միասին էին ներկայացել, չի վերացնում հետագայում առաջացած շահերի հակասության դեպքում Փաստաբանի համապատասխան վարքագծի ընտրության պարտականությունը:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի այն պնդմանը, որ Դիմողների պատվերը կատարվել և ավարտվել է, հետևաբար դրանից հետո իրենց նկատմամբ իր որևէ ներկայացուցչական պարտավորություն չի պահպանվել, ապա Խորհուրդը գտնում է, որ նախկին վստահորդի հետ հանձնարարության ավարտը չի նշանակում, որ դադարում են փաստաբանի՝ նախկին վստահորդի նկատմամբ շահերի հակասությունից խուսափելու և նախկին վստահորդի կողմից իրեն վստահված տեղեկատվությունը չօգտագործելու մասնագիտական պարտականությունները:

Հակառակ մեկնաբանությունը փաստաբանական գործունեության նկատմամբ վստահության տեսանկյունից կհանգեցներ այնպիսի իրավիճակի, երբ փաստաբանը կկարողանար անձից ստանալ նրա իրավական դիրքորոշման, գործարքի պայմանների, ակնկալիքների և այլ հանգամանքների վերաբերյալ տեղեկատվություն, այնուհետև, նույն հարցի շրջանակում հանձնարարությունն ավարտված համարելով, անմիջապես ստանձնել այդ անձի հակառակ կողմի շահերի պաշտպանությունը:

Հենց նման իրավիճակների կանխարգելմանն է ուղղված նախկին վստահորդի շահերի հետ շահերի հակասության վերաբերյալ մասնագիտական կանոնների նախատեսումը Օրենքով և Կանոնագրքով:

Հետևաբար, Դիմողների կողմից Փաստաբանին տրված հանձնարարության կատարման ավարտն ինքնին չի ազատել վերջինիս հետագայում Դիմողների դեմ հայց ներկայացնելուց առաջ շահերի հակասությունը գնահատելու և օրենքով ու Կանոնագրքով սահմանված արգելքները պահպանելու պարտականությունից:

Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ փաստաբանը չպետք է իրավաբանական օգնություն տրամադրի, եթե նա պետք է ներկայացնի վստահորդի շահերը մի հարցով, իսկ այդ շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքի, երբ նախկին վստահորդը տվել է իր գրավոր համաձայնությունը:

Կանոնագրքի 3.2.2 ենթակետով ևս սահմանված է շահերի հակադրության պայմաններում իրավաբանական օգնություն տրամադրելու սահմանափակումը:

Տվյալ դեպքում հաստատված է, որ Արման Վլասյանը և Անահիտ Գյուլնազարյանը դիմել են Փաստաբանին իրենց գույքի վաճառքի գործարքի իրավական ապահովման նպատակով, իսկ Փաստաբանը նրանց տրամադրել է իրավաբանական օգնություն և կազմել համապատասխան փաստաթղթեր:

Հետագայում նույն գործարքի մյուս կողմը՝ Նարեկ Բադալյանը, դարձել է Փաստաբանի վստահորդը, իսկ Փաստաբանը վերջինիս ներկայացրել է հենց Արման Վլասյանի և Անահիտ Գյուլնազարյանի դեմ՝ նրանց հետ կապված նույն գործարքի շրջանակում:

Այս պայմաններում առկա է ոչ թե վերացական կամ ենթադրյալ, այլ կոնկրետ շահերի հակասություն:

Գործում բացակայում է Դիմողների կողմից տրված գրավոր համաձայնությունը՝ Փաստաբանի կողմից Նարեկ Բադալյանի շահերը ներկայացնելու վերաբերյալ:

Այսինքն՝ անկախ այն հանգամանքից, թե սկզբնական փուլում կողմերը միասին են ներկայացել Փաստաբանի մոտ, թե ոչ, Նարեկ Բադալյանի և Դիմողների շահերը հակադիր դառնալուց հետո Փաստաբանը չէր կարող առանց նախկին վստահորդների գրավոր համաձայնության ստանձնել Նարեկ Բադալյանի շահերի ներկայացումը նրանց դեմ:

Հետևաբար, Խորհուրդը հիմնավոր է համարում Հանձնաժողովի եզրահանգումն առ այն, որ Փաստաբանի գործողություններով խախտվել են Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի և Կանոնագրքի 3.2.2 ենթակետի պահանջները:

Բողոքաբերը վիճարկել է նաև Կանոնագրքի 3.2.8 ենթակետի կիրառումը՝ պնդելով, որ Դիմողներն իրեն որևէ գաղտնի կամ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն չեն հայտնել:

Խորհուրդը նշված փաստարկի կապակցությամբ արձանագրում է հետևյալը:

Կանոնագրքի 3.2.8 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պետք է հրաժարվի նոր վստահորդի օգտին գործել, եթե առկա է նախկին վստահորդի կողմից վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ, կամ եթե այն տեղեկատվությունը, որին տիրապետում է փաստաբանը նախկին վստահորդի վերաբերյալ, կարող է անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդի համար:

Նշված կարգավորումից հետևում է, որ փաստաբանի՝ նոր վստահորդի օգտին գործելու սահմանափակումը պայմանավորված չէ բացառապես նախկին վստահորդի գաղտնի տեղեկությունների փաստացի բացահայտմամբ կամ օգտագործմամբ: Կանոնագիրքը նախատեսում է նաև այնպիսի իրավիճակների կանխարգելում, երբ փաստաբանին նախկին վստահորդի վերաբերյալ հայտնի տեղեկատվությունը կարող է նոր վստահորդի համար ստեղծել անբարեխիղճ արտոնություն:

Տվյալ դեպքում գործի նյութերով հաստատված է, որ Փաստաբանը ներգրավված է եղել Դիմողներին պատկանող անշարժ գույքի օտարման գործարքի նախապատրաստման գործընթացում, տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն և կազմել գործարքին առնչվող փաստաթղթեր: Այսպիսով, Փաստաբանը ոչ միայն տեղեկացված է եղել նախատեսվող գործարքի պայմանների մասին, այլև անմիջականորեն մասնակցել է դրա իրավական ձևակերպմանը՝ տեղեկանալով Դիմողների գույքային շահերի, իրավական

նպատակների, դիրքորոշումների և գործարքի իրականացման հետ կապված հանգամանքների մասին: Հետագայում Փաստաբանը ստանձնել է նույն գործարքից ծագած վեճերով Նարեկ Բադալյանի շահերի պաշտպանությունը՝ հանդես գալով նախկին վստահորդների դեմ:

Խորհուրդը կարևոր է համարում այն հանգամանքը, որ տվյալ դեպքում Փաստաբանը հանդես է եկել նույն իրավահարաբերության շրջանակում հակադիր կողմի շահերի պաշտպանությամբ, այլ ոչ թե նախկին վստահորդների հետ որևէ առնչություն չունեցող առանձին իրավական հարցով:

Ընդ որում, Փաստաբանի մասնագիտական ներգրավվածությունը գործարքի նախապատրաստման գործընթացում նրան հնարավորություն է տվել տեղեկանալու ոչ միայն գործարքի փաստաթղթային պայմաններին, այլև դրանց ձևավորման, կողմերի ակնկալիքների և նախատեսվող իրավական արդյունքին հասնելու հանգամանքներին:

Նման տեղեկացվածությունը հետագայում նույն գործարքից ծագած դատական վեճում հակադիր կողմի շահերը ներկայացնելիս կարող էր նշանակություն ունենալ իրավական դիրքորոշման ձևավորման, գործարքի պայմանների մեկնաբանման և նախկին վստահորդների պահանջների կամ առարկությունների գնահատման տեսանկյունից:

Հետևաբար, Խորհրդի գնահատմամբ՝ առկա է եղել Փաստաբանին նախկին վստահորդների վերաբերյալ հայտնի տեղեկատվության միջոցով նոր վստահորդի համար անբարեխիղճ արտոնություն ստեղծելու վտանգ:

Այդ պայմաններում Բողոքաբերի այն փաստարկը, թե Դիմողներն իրեն գաղտնի տեղեկատվություն չեն հայտնել, ինքնին չի բացառում Կանոնագրքի 3.2.8 ենթակետի կիրառելիությունը, քանի որ նշված ենթակետով նախատեսված սահմանափակումը վերաբերում է նաև նախկին վստահորդի վերաբերյալ փաստաբանին հայտնի տեղեկատվության միջոցով նոր վստահորդի համար անբարեխիղճ արտոնություն ստեղծելու հնարավորությանը:

Ընդ որում, Կանոնագրքի 3.2.8 ենթակետի կիրառման համար պարտադիր չէ, որ հաստատվի նախկին վստահորդի վերաբերյալ տեղեկատվության փաստացի օգտագործումը կամ դրա հետևանքով հասցված վնասը: Նշանակություն ունի այնպիսի վտանգի առկայությունը, որի կանխարգելմանն է ուղղված տվյալ վարքագծային սահմանափակումը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը հիմնավոր է համարում Հանձնաժողովի եզրահանգումը նաև Կանոնագրքի 3.2.8 ենթակետի պահանջների խախտման վերաբերյալ:

Այսպիսով, Բողոքաբերի ներկայացրած փաստարկները չեն հերքում Հանձնաժողովի կողմից հաստատված խախտման փաստը և չեն հիմնավորում Հանձնաժողովի որոշումը վերացնելու անհրաժեշտությունը: Հետևաբար, Խորհուրդը

գտնում է, որ Հանձնաժողովի 15.04.2026թ. թիվ ԿԳ-25095-2-Ա որոշումը պետք է թողնել անփոփոխ, իսկ դրա դեմ ներկայացված բողոքը՝ մերժել:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 1-**ին մասի**, 39.11-**րդ հոդվածի** 3-**րդ մասի և** 8-**րդ մասի պահանջներով**,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Սամվել Լևոնի Միրզոյանի կողմից ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 15.04.2026 թվականի թիվ ԿԳ-25095-2-Ա որոշման դեմ ներկայացված բողոքը մերժել:
2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 15.04.2026 թվականի թիվ ԿԳ-25095-2-Ա որոշումը:
3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Պավել Գյուլումյան**

09 հոկտեմբերի 2026թ.
թիվ ԿԳ/29-Ա
ք. Երևան